



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

20

ԳԼՈՒԽ ՄԼԲ ՎԱՍՆ ՈՐ ԽՐՏՅՆԷ ԶԳՐԱՍՏ, ԵՒ ՄԱՐԴՆ ԱՆԿԱՆԻ
ԵՒ ՎՆԱՍԻ

Եթէ կատարեալ ոք իցէ եւ չար կամօք գործիցէ, եւ անկեալն մեռցի, արեան դատաստան լիցի, որպէս եւ գրեալն է՝ հատուցի. իսկ բեկեալն՝ բժշկութեանն եւ դարմանոյն տացի. իսկ զգայութեանցն վնասելոյ՝ որպէս եւ գրեալն է, այնպէս հատուցի. իսկ ոչ անբիծ բժշկեալն՝ կէս զգայութեանցն հատուցի: Ապա թէ ընդ խաղ իցէ, նոյն լիցի դատաստան, զի ոչ խաղալ, այլ զարհուրել արժան էր, սակայն ներեցի վասն սովորութեան աշխարհի՝ մինչ ի կէսն հատուցանել կամ յերիցն՝ մին: Սոյն օրինակ եւ ապաշխարութիւնն լիցի, թէ ի դատաստան ոչ մտանէ: Իսկ եթէ մանուկ իցէ, տեսցի հասակն, որպէս յառաջագոյն գրեալն է, եւ այնպէս դատեսցի, միանգամայն չարակամութեամբ առնել կամ ընդ խաղ: Ճշգրտութեամբ տեսցի կամայն եւ ակամայն: Եւ զի կատարեալ ակամայ է, որոց յետոյ գեղջ հետեւի, իսկ կամաւորին՝ ուրախութիւն: Այլ թէ ըստ ինքեան գոք տեսնալ խրտնչի, եւ վնաս լիցի մահու, թէ ի թշնամեաց յայլազգեաց իցէ, զի բնութիւն է նոցա ի կորուստ մեր խնդալ, կէս արեան դատաստան լիցի. ապա թէ քրիստոնեայ թշնամի իցէ՝ կիսոյ կէսն, այլ ըստ ապաշխարութեանն՝ կէսն լիցի Եւ բեկելոյն եւ զգայութեանցն վնասելոյն այդոքիւք դատեսցին: Իսկ թէ չիցէ թշնամի, սակայն յահուր շարժմամբ վնասիցէ, մի՛ լիցի անպարտ յաղագս այլոյ ժամանակի զգուշութեան. քննելով՝ սակաւ յամենայնի տուգանք լիցի: Ապա թէ համեստ շարժմամբ եւ ըստ կարգի գնալն իցէ, տուգանաց դատաստան մի՛ լիցի,



բայց ըստ իւրոյ խղճին եւ ըստ կամաց. նմանապէս եւ ապաշխարութիւնն լիցի:

ԳԼՈՒԽ ՄԼԳ ՎԱՍՆ ԱԿԱՄԱՅ ԵՒ ԿԱՄԱՒ ՄՊԱՆՈՒԹԵԱՆՑ

Եւ ականայ սպանութիւն լինի բազում օրինակաւ, սակայն գնշանակաւ տացուք չափաւորապէս: Եւ է այսպէս: Զի ի հարկանել ուրուք փայտ եւ ոստեալ տապարն, որ է կացինն, եւ ունեք դիպեալ սպանցէ: Եւ կամ խոնարի ի բարձանց կամ ի լերանց թողեալ փայտ կամ քար՝ դիպեալ գոք սպանցէ: Եւ կամ յայգոյ, կամ ի դրախտէ, եւ կամ այլ ինչ յայսպիսեաց արտաքս ձգեսցէ քար եւ սպանցէ գոք: Կամ ի ծառ ձգեալ ոք քար ի թափել պտուղ, եւ քարն անկեալ ի վերայ ուրուք սպանցէ, եւ կամ ի ծառայ ի խոնարի թափել պտուղ, եւ քար իցէ մնացեալ ի ծառ կամ գաւազան անկեալ եւ կամ այլ ինչ այսպիսի, ուստի մահ գործեսցի: Կամ վարդապետ գաշակերտս վասն խրատոյ հարկանէ ըստ չափոյ, կամ հայր՝ գորդի, կամ մայր՝ գղութոր, կամ սկեսոր՝ գհարսն, կամ եղբայր՝ զեղբայր, եւ կամ տէր՝ զծառայ, եւ կամ տիկին՝ զաղախին, եւ այլ ոք՝ գոք, ուստի վնաս մահու լիցի: Եւ թէ գերիվար ոք ընդ հրապարակ վարիցէ, կամ գայլ ինչ ի կենդանեաց, կամ գսայլ, եւ առ ոտն կոխեալ՝ մահ լիցի: Եւ կամ նետ որսոյ ձգիցէ, եւ կամ ի նպատակ, այսինքն՝ ի մողոք, կամ էրէ վայրի, եւ պատահիցի ունեք եւ սպանցէ: Կամ թէ քար ոք ձգիցէ՝ կարծեցեալ քիսար գոյ: Է եւ այլազգ ականայ, յորժամ ի հետ մտանէ եղբայր զեղբայր սպանանել, եւ նա հարկաւորաբար դարձցի եւ սպանցէ, կամ ոք՝ գոք այդպէս: Կամ յաւազակաց ի մէջ անկեալ՝ ի հարկէ սպանցէ: Եւ են սոքա յականայէ եւ ի կամաւորէ: Իսկ ի պատերազմի սպանանելն՝ ի կամաւորէ եւ յականայէ: Եւ եթէ ոք ի գիշերի կարծիցէ զթշնամի հարկանել եւ հարեալ զբարեկամ սպանցէ. եւ է սա ի կամաւորէ եւ յականայէ: Եւ եթէ նետ ոք ձգիցէ, եւ թշնամոյ պատահեալ՝ սպանցէ, յականայէ եւ ի կամաւորէ է: Իսկ կամաւորն. եթէ ոք հարկանէ խիստ գաւազանաւ գմարդ՝ կարծելով յուղղութիւն ածել զչարագործն, մինչեւ հանեալ արիւն, յորմէ եւ մեռցի: Նոյնպէս՝ եթէ քարիւ կամ փայտիւ գոք հարեալ առաւել չարչարեսցէ, քան զկարն, ընդ այնոսիկ համարեալ է, որ սրով սպանցէ, կամ այլ ինչ յայսպիսեաց: Նոյնպէս՝ եւ որ փայտատ ինչ ձգիցէ, եւ ի ծանրութենէ երկաթին, եւ ի սրոյն իսկ, եւ ի ձեռացն երեւի հարուածն. ի բազմապատիկ դիմաց հարուածոյն, որ ի վերայ նորա են, գուշակէ գեղեալսն: Նոյն օրինակաւ՝ առանց իրիք հարկանելոյ կամաւոր չարիք, որ յաւազակացն լինին: Իսկ կանայք, դեղս արբուցեալ, արանց սովոր են

սպանել. նոյնպէս եւ որ առ նախանձու դեղս տայ մերձաւորի, ընդ մահապարտս համարեալ է: Եւ արանց եւ կանանց գոյգ է վճիռն: Արդ, այդոքիկ են կամաւոր սպանութիւնք եւ նմանք սոցա, եւ ակամայքն եւ խառն յերկոցունցն, որպէս ցուցաւ. եւ բժշկել խոստովանութեամբ յայտնի է: Այլ գղատաստան տացուք զօրինակ: Զի որպէս գրեցաւ ի դատաստան թագաւորացն, զի թէպէտ ակամայ այլազգի զքրիստոնեայ սպանանէ իբրոյ զի խնդայ, ըստ կամաւորի դատեսցի ի գին արեանն: Իսկ քրիստոնեայ զքրիստոնէ սպանեալ՝ կամաւոր է: Եւ է կամաւորն, յորժամ վասն նախանձու կնոջն, կամ յաղագս ընչից, կամ վասն փառաց, կամ վասն այլ պատճառի սպանցէ. որպէս եւ գրեալ է՝ լիով դատեսցի: Իսկ թէ ակամայ եւ թշնամի պատահի սպանեալն, յորոյ վերայ խնդայ, իբր զկամաւոր դատեսցի կամ ըստ ներման՝ ըստ կիսոյ, որպէս ի դատաստանս թագաւորացն գրեցաք: Իսկ թէ բնաւին ակամայ իցէ, ըստ այնմ լիցի դատաստան, եւ եթէ խառն ի կամաւորէ եւ յակամայէ, ըստ այնմ լիցի:

ԳԼՈՒԽ ՄԼԴ ՎԱՍՆ ՎՆԱՍՈՂԱՅ ԶՐՈՎ

Եթէ պատահի ունեք ջուր բերել առուով ի գործ ինչ կամ յաղագս ոռոգանելոյ եւ վճարեալ զիւր գործն եւ ընդ վայր թողեալ՝ վնաս ընկերին իւրոյ լինի՝ յայգի, կամ յանդաստան, կամ ի բնակութիւն ինչ առնիցէ, եթէ զգուշացոյց, եւ ինքն փոյթ կալաւ զգուշանալ, եւ ակամայ վնաս ինչ գործեցաւ, կէս վնասուն դատաստանաւ վճարեսցի. ապա թէ հեղգացեալ անփոյթ արար եւ ոչ զգուշացոյց՝ բաւանդակն վճարեսցի, մանաւանդ թէ թշնամութեամբ արասցէ: Սակայն օրինակն տեսցի, եթէ յունմէ՞ եղեւ՝ յիւրմէ՞ թէ ի վարձկանէ, ի կատարելո՞յ թէ յանկատարէ, ի գիշերի՞ թէ ի տուրնջեան, եւ այլն այդպէս դատեսցի:

ԳԼՈՒԽ ՄԼԵ ՎԱՍՆ ԲԺՇԿԱՅ

Բազումք ի բժշկաց բազում վնասս գործեն դեղօք կամ ի փորձել զդեղս յայլսն, կամ չարակամութեամբ սպանանեն դեղօք, կամ վասն անգիտութեան վնասակար դեղս տան, կամ անվարժք գոլով՝ զցաւսն ոչ գիտեն, կամ հեղգանան, վասն զի զվարձս ոչ տան, կամ նախանձելով ընդ աշակերտսն՝ ոչ ուղիղ ուսուցին, եւ նոքա անգիտանալով՝ բազում վնասս առնեն, եւ թէ այլ ինչ ախտս ցաւոց մուծին՝ եւ եթէ այլ ընչիւքն եւ եթէ աշակերտօքն, զայսոսիկ զամենեսեան

կամաւոր գիտենք: Իսկ ակամայք. գոր ի հիւանդին տեսողացն հեղգութենէ գործին կամ ի հիւանդին, կամ զի ըստ հրամանի նոքա գիւանդն ոչ դարմանեցին, կամ ի մեծ ինչ հարկէ ոչ եղեւ հնար գալ բժշկին առ հիւանդին, կամ գիտութեամբ դեղ տուեալ կենաց՝ մահու եղեւ պատճառք: Սոյնպէս հատանելն եւ խարելն այդոքիւք դատեսցին: Արդ կամաւորացն արեան լիցի դատաստան, երբ վնասն յայտնին, ապա թէ խոստովանութեամբ ծնուցի՝ կամաւորի ապաշխարութիւն լիցի. իսկ ակամային՝ անպարտ յիրաքանչիւրսն լիցի: Իսկ ի կամաւորէ եւ յակամայէ եղեալ վնասն՝ մի՛ լիցի անպարտ յիրաքանչիւր յիրսն:

ԳԼՈՒԽ ՄԼՁ ՎԱՍՆ ՈՐ ՀԱՐԿԷ ԶՄԱՐԴ ԵՒ Ի ԲԱՆ ՂՐԿԷ, ԵՒ ՄԱՐԴՆ ՄԵՌԱՆԻ

Եթէ ոք գոր ի գործ ինչ հարկիւ առաքէ, եւ վնաս լիցի մահու, այսպիսի ինչ. եթէ ի ծառ հանէ թափել պտուղ ի հարկէ, կամ ընդ գետ անցանել, կամ ի խումար ձի հեծուցանէ, կամ այլ ինչ այսպիսի, կամ վարձկան ի բան յղեալ ի հարկէ, եւ մահ պատահի, այդոցիկ արեան դատաստան լիցի ի կամայէ եւ յակամայէ, առաւել լիցի բռնադատողացն: Իսկ վարձկանին եւ իւրոցն՝ եթէ աւելի քան գտվորութիւնն դատէ կամ հարկանէ, ընդ դատաստանաւ է կամայի եւ ակամայի:

ԳԼՈՒԽ ՄԼԷ ՎԱՍՆ ՄԱՐԱՊՆԵՐՈՅ ԵՒ ՄՇԱԿԱՅ

Յաղագս այգեգործաց եւ այլոց ճշգրտել գորինակն ոչ կարեմ՝ յաղագս գանազան սովորութեանց գաւառաց, բայց սակաւ ինչ նշանակ տացուք իրաւանց, զի ըստ սովորութեան վճռին այն հաստատուն առ նոսա կայցէ: Արդ, մի՛ ոք անիրաւութեամբ գրկանս ինչ գործեսցէ, այլ իրաւամբք գրաժանումն արասցէ ընդ ընկերին: Իսկ գող գտեալ ոք ի նոսա, կրկին տուժեսցի եւ ոչ չորեքկին՝ ըստ օրինացն, զի յիւր վաստակսն եւ ոչ յօտարին անիրաւէ: Իսկ վարձաւ մշակացն վարձ ի յեղանակս առատութեան եւ նուագութեան դատեսցի. առաւելեալ՝ ի նուագն լիցի, եւ պակասեալ՝ յառաւելուլն: Նմանապէս եւ յաղագս տեղեացն լիցի:

ԳԼՈՒԽ ՄԼԸ ՎԱՍՆ ՀՈՎՈՒԱՅ ԵՒ ԱՆԴՊԱՀԻՅ

Եւ հովիւք եւ անդալաիք ըստ սովորութեան գաւառաց գանազանին ի վարձս, սակայն ի ճշմարտութիւնն, որպէս կարգեալ եղեն, պահեսցի ի նոսա: Արիութեամբ գգուշացեալ լիցին, եւ թէ պատահի գազանաբեկ լինել, յորժամ չիցէ ի ծուլութենէ, վկայ ի գէշն ածցէ եւ անպարտ է: Եւ թէ չիցէ մերձ, եւ պատճառ անհոգութիւնն իցէ եւ կամ այլ ինչ, որ թէ պատահեալ էր մերձ՝ անվնասելի էր, դատաստանաւ է վճարել նոցա՝ կամ բաւանդակ, կամ ընդ կիսոյ. բաւանդակ՝ եթէ բնաւ յանփոյթութենէ եղեւ, եւ կիսոյ՝ եթէ խառն ինչ էր: Յակամայից եղեալ վնաս՝ ի վարձէ մի՛ գրկեսցին: Իսկ եթէ ի ծուլութենէ յայլոց այդպիսեաց պատճառաց գողացին, դատաստանաւ է վճարել: Իսկ եթէ իւր գողացաւ եւ յայտ եկեալ, միոյն չորս եւ հինգ վճարեսցէ ըստ Օրինացն Այլ հարեալն եւ սպանեալն, վճարեալ լիցի, ի քարէ կամ ի գաւազանէ, նմանապէս՝ հարկանելն եւ բեկանելն, կամ հարցէ եւ վնասեսցէ՝ ըստ այնմ լիցի, եթէ ի վայր ելեալ ծնունդն մեռցի, եւ ինքն անփոյթ արարեալ մերձ ոչ իցէ: Դոյն լիցի եւ որք գձիս եւ գջորիս արածեն: Իսկ գմիմեանս հարեալ եւ սպանեալ՝ ըստ Օրինացն դատեսցի:

ԳԼՈՒԽ ՄԼԹ ՎԱՍՆ ՈՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻՍ ՏԱՆ ԵՒ ԱՅԼ ԻՐՔ

Եթէ պատահի աւեր եկեղեցոյն, յոր նուէրն եղեւ, թէ ի վանս, թէ ի գեղ, եւ աշխարհականք բնակելով առցեն եւ կերիցեն, իշխան լիցին այնոքիկ, որք նուիրեցին, առնուլ եւ յայլ եկեղեցիս նուիրել, թէ չիցէ կարծիս շինութեան, ապա թէ իցէ՝ ինքեանք սպասաւորեսցեն, մինչեւ շինեսցի, եւ մի՛ առ իւրեանս կալցին, զի Աստուծոյ է բաժին, յորմէ հետէ նուիրեալն եղեւ: Այլ թէ պատահի գաւերեալ եկեղեցոյ գժողովորդ առնուլ եւ այլ եկեղեցոյ տալ, յորժամ շինեսցի՝ առանց հակառակութեան անդրէն դարձուցէ եպիսկոպոսն: Ապա թէ ոք յայլոց ժողովորդ կամեսցի եկեղեցի շինել հակառակելով, մի՛ տայցէ թոյլ եպիսկոպոսն. ապա թէ պահանջեսցեն ըստ պիտոյից, ըստ հրամանի եպիսկոպոսին եղիցի շինել:

ԳԼՈՒԽ ՄԽ ՎԱՍՆ ՎԱՃԱՌԱՑ

Եւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս կամ յիշխանաց՝ ըստ հրամանի թագաւորաց, թէ ի քաղաքս, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի

գաւառ: Եւ նախադրութեամբ գշափս, եւ գկշիռս, եւ գոյգս նոքա դիցեն՝ տեսանելով զգօրութիւնս վաճառին: Կարգեսցեն եւ կոփիչս միշտ որոնել եւ տեսանել, զի մի՛ նենգութեամբ ինչ արասցեն: Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի: Գողին ի չափս եւ ի կշիռս հատուցանել չորեքլին եւ յանդիմանութեամբ նշաւակել ի գարիորումն այլոցն: Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զձեռնս հատանել հրամանաւ իշխանաց: Իսկ գմաքսն առնուլ իրաւապէս, յորժամ ի քաղաքս կամ ի գաւառս եկեալ վաճառիցեն: Այլ մի՛ լիցի յանցս ճանապարհաց մաքսել, եթէ ոչ վաճառիցեն, բայց վարձս միայն, թէ ընդ նոսա գնալով ի թշնամեացն պահիցեն: Այլ մաքս, որ է բաժ, հրամանաւ թագաւորաց լիցի եւ իշխանաց՝ հրամանաւ թագաւորաց: Այլ ի վաճառս խաբողաց գտգէտսն՝ ըստ գողիցն հատուցի: Իսկ զգին հացի եւ գինոյ եւ գայլոց այսպիսեաց, ըստ քաջաբերութեան ամի կամ ըստ այլ իմիք պատճառի, նմանապէս ըստ նուագութեան եւ ըստ այդպիսեաց պատճառի փոփոխի ի վեր եւ ի վայր՝ թագաւորաց հրամանաւ լիցի եւ իշխանաց, յիշատակելով գաւառապետաց եւ ժողովրդապետաց: Այլ անհաստատ լիցի փոխելն յաղքատաց ըստ կարեաց վաճառողաց եւ կամ փարթամաց՝ անկարօտից վաճառողաց: Բայց իշխանք ի վեր եւ ի վայր զգինս առնել՝ ուղիղ տեսեամբ արասցեն, զի մի՛ մշակք եւ այլ ինչ գործօնեայք, նմանապէս՝ վաճառականք, վրիպեալք գրկիցին յիւրաքանչիւր յերկանց. եւ կամ դատաւորք ճշգրիտ քննութեամբ ըստ հրամանի իշխանաց առնիցեն:

ԳԼՈՒԽ ՄԽԱ ՎԱՄՆ ԳՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐԱՑ

Արուեստաւորք ամենայն ըստ որում եւ իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն եւ եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեսոն գործիցեն, այլ եւ գնիւթն ապականիցեն, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ կամ գապականեալն ի գնոյն ըստ արժանոյն լնուլ եւ ապա լիով հասանել վարձու, ապա թէ ոչ՝ պակասեալ ի վարձէն ըստ արժանոյն, որպէս տեսանեն դատաւորք՝ արասցեն: Իսկ գող գտեալ՝ ըստ Օրինացն հատուցեն եւ զկորուսեալն վճարեսցեն: Իսկ թէ վնասեալ իցէ՝ կամ ի մկանէ, կամ այնպիսի պատահի նիւթն, վասն բազում ժամանակեայ առ ինքեանս պահելոյ, կամ այլ ինչ վնասիցէ, հատուցեն դատաստանաւ, զի ի գործել եւ ոչ յապականել ետուն: Այլ ի նոցանէ եթէ գողասցին եւ զինքեանցն եւս, եւ հաւատարմացի, անպարտ լիցին,

ապա թէ ի գործ առեալն միայն եւ յամրագոյն տեղոջէ առեալ իցէ, ընդ կիսոյ վճար լիցի. իսկ յանգգուշութեան տեղի գեղեալն՝ լիով հատուցեն: Իսկ յաւարի երթալոյն անպարտք լիցին: Այլ զգրաւ եղեալն եւ զկորուսեալն վճարեսցեն: Իսկ զհրով այրեալն ի հասարակաց թշնամեաց՝ մի հատուցեն, այլ վասն ինքեանց եղեալ՝ հատուցեն, այլ տերանցն աղագաւ՝ մի հատուցի: Չայդ այդպէս դատեսցեն:

ԳԼՈՒԽ ՄԽԲ ՎԱՍՆ ՈՐ ԱՆՕԹ ԱՌՆՈՒ Ի ԲԱՆ ԵՒ ՎՆԱՍԷ

Վարձկանք, որք տերանց գործիք վարին, որպէս երկրագործք, ի վնասելն զգործիս ըստ սովորութեան, անպարտք են, իսկ յիրեանց ի գործսն վնասելով՝ վճար լիցի տերանցն: Իսկ ինքեանց գործիք վարելով, որպէս հնձողք, ինքեանց վնասն լիցի, իսկ եթէ գտեառն ի վարձու առցէ եւ ըստ սովորութեան վնասիցէ, տեառն լիցի: Այլ թէ ի բան առեալ ի տեառնէ եւ վնասեսցէ, վճար լիցի. եւ թէ չար կամօք վնասելով՝ վճարեսցէ:

ԳԼՈՒԽ ՄԽԳ ՎԱՍՆ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԻ

Չդատաստանս դատաստանի այսպէս պարտինք իմանալ: Չի յորժամ սպանողի կամ այլ չարագործի կրկին ցուցանէ պատիժս, քննել արժան է, զի յորժամ զգին արեանն, առցեն, թեթեւ ապաշխարութիւն լիցի: Թէպէտ արեամբ գնոյ վճարիլ կարծի, մի՛ արասցեն առանց ապաշխարութեան, զի չիք գին մարդոյ, բայց միայն փոխանակ մեռանիլ ըստ Օրինացն եւ կանոնացն: Այլ թէպէտ զհորն գնելով զարիւն՝ զսպանելոյն կարծի, այլ չիք գին մարդոյ, ապաշխարութեամբ լցցի, զի գինն ըստ կարի եղաւ եւ ոչ ըստ արժանոյն: Այդ բաւական լիցի, թէ չիցէ սովորութեամբ չարն, ապա թէ կարծիս իցէ դարձեալ վնասու, զխրատն առցէ եւ ձեռս: Իսկ եթէ աղքատ իցէ, բաւական լիցի խրատն: Իսկ տուգանք յաղագս արքունեացն գրեցաւ ըստ կարի, իսկ աւարն՝ փոխանակ տուգանի, այլ արեան գինն իւրոցն լիցի: Այդ ըստ դատաստանի լիցի յայտ եկելոցն, իսկ անյայտքն խոստովանութեամբ ուղղեսցին ըստ իւրոյն սահմանի: Միանգամայն ամենայն դատաստան ըստ իրին քննութեանն լիցի: Իսկ պատիժն ըստ վնասուն համեմատ լիցի, որպէս չարագործաց զարականսն հատանել զանդամսն՝ նմանելով աստուածային դատաստանին, ըստ այնմ՝ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս,

որպէս մեծատանն փոխանակ ոչ արբուցանելոյն՝ պասքումն, եւ ցանկացողաց չարեացն՝ հոր, եւ անողորմիցն՝ տանջանք, եւ ատողացն զլոյս գիտութեան՝ խաւարն, եւ որ ըստ այսմ: Այդոցիկ նման լիցի եւ մերս դատաստան:

ԳԼՈՒԽ ՄԽԴ ՎԱՍՆ ԶՐԱՂԱՑԱՅ ԱՂՕՆԱԽՈՐԱՅ

Զրաղացպանք փորձ լիցին արուեստի ամենայն կագնուածի, զի մի՛ բագնատանջն ապականէ զկերակուրն աներկեղութեամբ: Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձիլ, այլ զվնասն եւս տուծել: Ապա թէ պատճառն ի գիշութենէ աղունին իցէ, անպարտ լիցին. իսկ ի ջուրն անցեալ գալիւրն վճարիցեն: Այլ զգողացեալն՝ չորեքկին, եւ կոփողաց, այսինքն՝ մոխթասպաց, յանդիմանութիւն լիցի նշանակաց: Այլ թէ աղացողն աւելի, քան զպատրաստեալն, ի վեր եւ ի խոնարհ արասցէ զքար ջրաղացին եւ վնաս ինչ արասցէ, վճարն ի նմանէն լիցի, զի ասել ի դէպ էր պատրաստողին եւ ոչ իւր համարձակիլ: Այլ վարձն ըստ գաւառաց զանագանին, բայց փոփոխին ի նուագութենէ հացի եւ ջրոյ կամ յառաւելութենէ: Եւ այդ անսահման լիցի յիւս դատաստանի:

ԳԼՈՒԽ ՄԽԵ ՎԱՍՆ ՈՐ ԶԳՐԱՍՏ Ի ԶՈՒՐ ԵՒ ՅԱՐՕՏ ԵՒ Ի ԲԱՆ ՏԱՅ ԱՅԼ ՄԱՐԴՈՅ, ԵՒ ՎՆԱՍԻ

Զի եւ այս բագում անգամ պատահի լինել՝ տալ զերիվար կամ այլ գրաստ եւ ի գործ առաքել գորք, եւ անտի լինի վնաս՝ կամ ի ջուր, կամ յարօտ, կամ շրջեցուցանել: Եթէ խստերախ իցէ, եւ ոչ զգուշացոյց եւ բռնաբարելով առաքեաց, եւ հեծեալ անկաւ եւ մեռաւ, կամաւորի դատաստան լիցի. ապա թէ զգուշացոյց, եւ չէր խստերախ, եւ ոչ բռնադատեաց՝ ակամայի, զի ոչ էր յիւրոց եւ ոչ ի վարձկանաց: Իսկ թէ կամօք չոգաւ վարձ զարշաւանսն առեալ, եւ զգուշացոյց, եւ խստերախ լինելով՝ անկաւ կամ՝ անվարժ գոլով, մանաւանդ թէ կատարեալ հասակաւ իցէ, անպարտ տէր կենդանոյն իցէ. իսկ թէ մանուկ իցէ, մի՛ լիցի անպարտ: Իսկ թէ անկեալ ոչ մեռաւ, զդատարկութեանն եւ զբժկութեանն այդոքիւք դատեալս լցցեն, նաեւ ոչ զկատարեալ առողջանալն եւ զվնաս զգայութեանն: Ապա թէ զերիվարն կամ գայլ ինչ զկենդանի հեծեալքն վնասիցեն՝ կամ բեկանելով, կամ սպանանելով, թէ զսովորականն պահելով հրահանգ ի

վարելն, կամ ըստ պատուիրանի առաքողին, յորժամ նա առաքեաց, վարիցէ, անպարտ լիցի հեծեալն, յորժամ հաւատարմացուցէ: Ապա թէ արշաւանս արասցէ, եւ ոչ ըստ պատուիրանին վարիցէ, կամ ընդ դժուարինս կագիցէ եւ վնասիցէ, լիով տուժեցի՝ պակաս ի մասնէ. իսկ կամաւոր տարողացն՝ բաւանդակն:

ԳԼՈՒԽ ՄԽԶ ՎԱՍՆ ՀՈՂԱԴՐԱՄԱՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Հողադրամդ այժմ անուանեալ ոչ է ի կանոնական հրամանաց, զի կանոնք գանկողին եւ գայլ ինչ այսպիսի յիշատակէ: Արդ, դրամդ հողոյ ի կապալաւոր քահանայից եղեւ վաճառել զգերեզմանս, մինչ զի եւ հաղորդի առնուն դրամ եւ Աւետարանի: Բայց քրիստոնեայք ըստ յուսոյ տան զդրամ հողոյ, եւ այնքիւք ոչ շատանան, այլ բռնադատեն եւ գայթակղեցուցանեն, որում համարս տալոց են Աստուծոյ, կամ զի այլոց քահանայից ըստ կարի տալ կամեցան, յայնմանէ ուսան եւ իւրքն պահանջել: Այլ չէ պարտ քահանայից առանց կոչման գնալ ի մեռելոյ մահ վասն ինչս առնելոյ, ապա թէ սիրելի իցէ եւ կամ աղքատ, որ զով ոք ոչ ոնիցի, երթիցէ առանց կոչման եւ ըստ այլ պատճառի, ի սուգ երթիցէ եւ մի՛ առցէ ինչ: Իսկ քահանայ վախճանեալ, որ յաշխարհի իցէ, թէ չունի ժառանգ, եպիսկոպոսաց լիցի, իսկ զհասոյթսն իւր եպիսկոպոսն առցէ եւ զհանս դերձսն, եւ գանկողինն, զի նա է ձեռնադրող նորա, եւ զժողովուրդն ըստ կամաց իւրոց տացէ յայլ քահանայ. ապա թէ ժառանգ ոնիցի, եւ արժանի լիցի, մի՛ փոխեցէ, իսկ յանարժանից՝ փոխեցէ, զի ժողովուրդ ժառանգութիւն ոչ է, բայց եպիսկոպոսին: Քահանային է ժողովուրդ, զոր ձեռնադրէ տամբ իւրով, զի կանոնք ոչ հրամայէ զեղբարս երիցանց ուտել ի ժողովրդենէ, նոյնպէս եւ ոչ լինել ժողովուրդ եպիսկոպոսին, կամ թէ իցէ կին եւ որդիք միայն: Այսպէս եւ իւրաքանչիւր ձեռնադրողք զձեռնադրեալսն կալցեն: Իսկ հայրապետք, զի ի բազմաց ձեռնադրին, բազումք կալցին, այլ տունն ի բազմաց վայելէ՝ բազմաց լիցի, որպէս գրեալ է. ապա թէ ոչ կամեցի հայրապետն՝ իւր լիցի: Իսկ զխաչ, եւ զգիրք, եւ զշուրջառ, զոր տայ հայրապետն եպիսկոպոսին, գնոյն առցէ ի մահուն, իսկ զոր եպիսկոպոսն իւր լիցի արարեալ, նովիմբ զեպիսկոպոսարանն ում կամի՝ շնորհեցէ: Նոյնպէս արասցէ եպիսկոպոսն քահանային, թէ իցէ ժառանգ: